ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը **ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե**

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **ՀՀ վարչապետի 05.06.2025թ N 486-Ա որոշում**

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)
ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող Խաչատուր Խաչիկյան
(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը **Ֆինլանդիայի Հանրապետություն (Հելսինկի)**

5. Գործուղման ժամկետները **2025 թվականի հունիսի 23-27**
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ **1 .**
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝* ***ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ***)
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		***Խաչատուր Խաչիկյան***	**Ընդամենը (հազ. դրամ)**
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս,բիզնես դաս)	-	-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	-	-
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	-	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	-	-
	Օրերի քանակը	-	-
	Ընդամենը (դրամ)	-	-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	-	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	-	-
	Օրերի քանակը	-	-
	Ընդամենը (դրամ)	-	-
Այլ ծախսեր	Մուտքի արտոնագրի վճար	-	-
	Ավիատոմսի ամրագրման համակարգի սպասարկման ծառայություն	-	-
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		-	-

Գլխավոր քարտուղար _____ **Ա. Վարդանյան**

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**. Խաչատուր Խաչիկյան, ՀՀ կառավարությանն ենթակա միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) նախագահի պարտականությունները կատարող:
2. **Գործուղման վայրը և ժամկետը**. Ֆինլանդիայի Հանրապետություն, Հելսինկի, 2025թ. հունիսի 23-27:
3. **Հրավիրող կողմը**. IDOM Consulting, Engineering, Architecture (այսուհետ՝ IDOM)
4. **Գործուղման նպատակը** մասնակցել Եվրոպական միության (ԵՄ) կողմից ֆինանսավորվող INSC/2024/436-156 «Միջուկային անվտանգության կարգավորման համագործակցություն Հայաստանի կարգավորող մարմնի հետ A3.01/20» ծրագրի շրջանակում տեխնիկական հանդիպմանը:
5. **Քննարկված թեմաները**. Ֆինլանդիայի միջուկային և կարգավորող ենթակառուցվածքի ընդհանուր ուրվագծերը, Ֆինլանդիայում միջուկային թափոնների կառավարումը, փոքր մոդուլյար ռեակտորներին վերաբերող ֆիննական կարգավորումները և ընթացիկ իրավիճակը, ինչպես նաև Հայաստանում միջուկային և կարգավորող ենթակառուցվածքը և ռադիոակտիվ թափոնների կառավարման համակարգը:
6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   Գործուղման ընթացքում ներկայացվեց Ֆինլանդիայի միջուկային էներգիայի օգտագործման օրենքի և կարգավորող այլ փաստաթղթերի վերանայման/լրամշակման հիմքերն ու նպատակները՝ մասնավորապես՝ կարգավորող փաստաթղթերի կիրարկման հետ կապված դժվարությունները, ազգային օրենսդրության և միջազգային չափանիշների փոփոխությունը, նոր տեխնոլոգիաների ներգրավվումը(փոքր մոդուլյալ ռեակտորներ):

   Օրենսդրության վերանայման/լրամշակման նպատկներն են՝ լիցենզավորված անձանց և մարմինների իրավասությունների հստակ սահմանումը, անվտանգության հետ կապված ռիսկերի գնահատումը, նոր տեխնոլոգիաների կիրառման հետ կապված կարգավորումների սահմանումը անվտանգության բարձր մակարդակի պահպանման նպատակով:

   Նշվեց նաև, որ Ֆինլանդիան ունի միջուկային թափոնների կառավարման առաջավոր ծրագիր՝ բոլոր տեսակի թափոնների կառավարման և վերջնական թաղման լուծումներով՝ մասնավորապես՝ ցածր և միջին ակտիվության թափոնները պահվում են միջուկային տեղակայանքների հրապարակներում, ներառյալ դրանց վերջնական թաղումը, իսկ աշխատած վառելիքը (բարձր ակտիվության թափոն) պահեստավորված է տեղակայանքի հրապարակում, և դրա վերջնական թաղման գերեզմանոցը կառուցման փուլում է (կառուցման լիցենզիան տրվել է, շահագործման լիցենզիայի հայտը քննարկվում է կարգավորող մարմնի կողմից):

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Հանդիպման ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել։

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

9. **Ստորագրությունը, ամսաթիվը** .

Ստորագրող
ԽԱՉԱՏՈՒՐ ԽԱՉԻԿՅԱՆ
3309700070

2025-07-03 16:13:13 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Խաչատուր Խաչիկյան